

ԿՐՈՆԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

*Յու.Ա. Գասպարյան,
Խ.Արուսյանի անվան ՀԱՄԱՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ
և սոցիալական աշխատանքի ամբիոնի
վարիչ, սոցիոլոգիական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

*Գ.Ս. Մկրտչյան,
Խ.Արուսյանի անվան ՀԱՄԱՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ
և սոցիալական աշխատանքի ամբիոնի
դասախոս*

Հայ ազգի հոգևոր մշակույթի պատմությունը առանձնակի է կարևորվում, երբ հայ լուսավորիչները և իմաստասերները դեռ IV դարում հետապնդում էին հայոց համակեցության համար մի ընդհանուր նպատակ: Բանն այն է, որ տարածքային ամբողջականությունից և քաղաքական անկախությունից զրկվածության պայմաններում, ազգն իր հոգևոր մշակույթի պահպանման ուղիներ էր որոնում: Այս էր հիմնական պատճառը, որ 301 թվականին Քրիստոնեության ընդունումը իր առջև խնդիր դրեց պահպանել հայոց ազգայնականությունը:

«Քրիստոնեության ընդունումը ինչ-որ տեղ գիտակցված քաղաքական ակտ էր, որը ոչ միայն խթանում էր ազգային հոգևոր մշակույթի զարգացումը, այլ նաև ազգի լուսավորության՝ կրթության և դաստիարակության տարածումը»: Այս առիթով հարկ է նշել, որ մինչև այսօր էլ Հայ Առաքելական Եկեղեցին՝ որպես սոցիալական ինստիտուտ, իր ուղիղ վարդապետության կողմից տարվող ծառայությունների շնորհիվ քրիստոնեության գաղափարները անընդմեջ ձևավորում է երիտասարդության շրջանում: Հայաստանում քրիստոնեության ժամանակակից գիտական ըմբռնումն առանձնակի հրատապ է ոչ միայն անկախության և մշակութային ինքնատիպության պահպանման համար՝ որպես պայքարի գործոն, այլև այն բանի համար, որ քրիստոնեությունը եղել է և մնում է աճող սերնդի սոցիալականացման կարևորագույն դպրոց: Այսօր Հայ Առաքելական Եկեղեցին համարվում է ազգային ինքնատիպության ձևավորման ու պահպանման, ինչպես նաև ազգի բարոյական առողջացման ու

¹ Гаспарян Ю.А., Семья и церковь как единая система регуляции народных традиций и обычаев, СПб, 2002, ст.137.

կատարելագործման կարևորագույն գործոն: Եվ ինչպես ցույց են տալիս մեր հանրապետությունում կատարված սոցիոլոգիական հետազոտությունները, հետխորհրդային Հայաստանում հավատացիալների դրությունը աստիճանաբար փոխվում է: 1990-ական թվականներից մինչև այսօր կրոնականությունը Հայաստանում բնութագրվում է աճող դինամիզմով, նրանում ընթացող գործընթացների հավանականությամբ, հետագա զարգացման միտումների անկանխատեսելիությամբ¹:

ԽԱՐՈՎՅԱՆԻ անվան ՀԴՄՀ Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի բարձր կուրսեցիների կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ տարեցտարի աստիճանաբար մեծանում է Հայ Առաքելական Եկեղեցու դերը հայ մարդու առօրյա կյանքում, հատկապես՝ երիտասարդության շրջանում: 298 ուսանող-երիտասարդների շրջանում կատարված հարցումները ցույց տվեցին, որ նրանցից 62.6 %-ը գտնում է, որ Հայ Առաքելական Եկեղեցին ունի դրական ներդրում աճող սերունդների հոգևոր առաջընթացի և սոցիալականացման գործում, իսկ 37.4%-ը դժվարացել է պատասխանել: Հայ Առաքելական Եկեղեցու դրական ներդրումը կայանում է հետևյալում՝

43.1% - ազգային-հոգևոր մշակութային տարրերի դաստիարակման,

26.5% - ազգային գիտակցության պահպանման,

15.6% - Աստծո պատվիրանների կատարման նկատմամբ հավատի ներշնչման,

14.4% - բարոյական նկարագրի կերտման:

Այն հարցին, թե (62.6 %-ը, որոնք գտնում են, որ եկեղեցին դրական դեր է կատարում հայ երիտասարդության սոցիալականացման գործում) ինչ չափանիշներով է այսօր հայ երիտասարդն իրեն համարում Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ, պատասխանել են հետևյալ կերպ.

38.8% - հաճախում են եկեղեցի իրենց հոգևոր հանգստության նպատակով և մոմ վառելու առիթով,

32.1% - մասնակցում են ծիսակատարություններին և եկեղեցական տոներին,

20.8% - ցանկություն ունեն հաղորդակիցը լինելու վարդապետների կողմից մատուցվող ծառայություններին,

¹ Գասպարյան Յու.Ա., Հայ առաքելական եկեղեցին և նրա դերը նոր սերնդի սոցիալականացման գործում, Երևան, 2004, էջ 52:

7.7% - եկեղեցի հաճախելով՝ համարում են կատարած Հիսուս Քրիստոսի նկատմամբ իրենց պարտքը:

Հարցվողների 72.2%-ը պատասխանել է, որ նրանք հիմնականում եկեղեցի են հաճախում շաբաթ, կիրակի և տոն օրերին, երբ մարդաշատ է եկեղեցին, և եկեղեցական ծառայությունները անց են կացվում վարդապետների բարձր պատասխանատվությամբ, իսկ եկեղեցական տոնի ժամանակ ծառայությունները անց են կացվում կաթողիկոսի բարձր հովանավորության ներքո և նրա մասնակցությամբ:

Երիտասարդները սիրով մասնակցում են եկեղեցու Սուրբ Ծնունդին, Ջատիկին, Վարդավառին, Մարիամ Աստվածածնի Ծնունդին, Կույսերին նվիրված տոնին, Խաղողի բերքահավաքի տոնին և այլ տոների, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները երիտասարդության սոցիալականացման և նրանց մոտ հոգևոր մշակույթի ձևավորման գործում: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայ Առաքելական եկեղեցին երիտասարդության համար հանդիսանում է միջնորդ, որպեսզի նրանք հաղորդակցական կապ հաստատեն տիրոջ հետ՝ նրանք մեծ տեղ են հատկացնում այն գործունեությանը և սպասարկմանը եկեղեցում, որոնք կատարվում են եկեղեցական ծառայողների կողմից: Եվ այն հարցին, թե ինչպես են գնահատում երիտասարդները եկեղեցու սպասավորների կողմից տարվող աշխատանքները՝ 39.1%-ը պատասխանել է դրական, 10.1%-ը՝ բացասական, իսկ 50.7%-ը դժվարացել է պատասխանել:

Կատարված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները, մեր դիտարկումները, ինչպես նաև հոգևորականության ներկայացուցիչների կողմից տարվող աշխատանքները վկայում են, որ Հայաստանի երիտասարդության զգալի մասը ձգտում է դեպի կրոնը: «Սակայն դեռ շատ դեպքերում կրոնի հետ հաղորդակցվածների մեծ մասի նվիրվածությունը հավատքին և ծեսերին դեռևս մակերեսային է և չի դարձել կայուն պահանջմունք»¹: Հավատքի հարցերում նրանք դժվարությամբ են կողմնորոշվում և ժամերգություններին մասնակցում են երբեմն-երբեմն: Քիչ չեն այն երիտասարդները, որոնք իրենց դասում են հավատացյալների թվին, բայց եկեղեցական ծառայությունների ժամանակ անհարմար են զգում նույնիսկ խաչակնքվել՝ ունենալով բավական սառը վերաբերմունք թե՛ հավատքի և թե՛ պաշտամունքի նկատմամբ: Այս բոլորը ունեն օբյեկտիվ պատճառներ: Բանն այն է, որ «մինչև այսօր մեր հանրապետության կրթական օջախները, այդ թվում նաև բարձրագույն ուսումնական հաստատությունները, չեն կարողանում հոգևոր

¹ Гаспарян Ю.А. , Семья на пороге XXI века, СПб, 1999 , ст. 145.

դաստիարակությունը զարգացնել ու կատարելագործել ուսանող-երիտասարդների շրջանում»¹:

Մեր կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները նույնպես ցույց տվեցին, որ հետզհետե մեծանում է հավատացյալ երիտասարդների թիվը Հայաստանում: Եվ հավատացյալների միայն 37.4%-ն է, որ դժվարացել է գնահատել եկեղեցու դերը երիտասարդների սոցիալականացման գործում:

Մոտակա տարիներին սպասվում է հավատացյալների թվի էլ ավելի մեծացում՝ կապված երիտասարդության հետ պետության և եկեղեցու կողմից դաստիարակչական աշխատանքների ուժեղացմանը նվիրված միջոցառումների հետ: Նման աշխատանքները պարտադիր են երեք հիմնական պատճառներով՝

1. Ավագ սերնդի վրա դեռ գործում է խորհրդային պետության և գաղափարախոսության աթեիստական դաստիարակությունը:

2. Խորհրդային Միության փլուզումից հետո երիտասարդ սերունդը դեռևս համապատասխան և լիարժեք հոգևոր դաստիարակություն չի ստացել:

3. Քրիստոնեության վերածննդի գործընթացը անհամաչափ է զարգանում Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Համաձայն մեր կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների, եթե ներկայումս Հայաստանի երիտասարդների 1/3-ից ավելին /37.4%/ դժվարանում է պատասխանել, թե ինչ դեր կարող է խաղալ իրենց կյանքում կրոնը, ապա այս ամենը հետևանք է նաև այն բանի, որ խորհրդային իշխանության տարիներին եկեղեցու և նրա կողմից կատարվող ծառայությունների վրա այնքան կեղտ էր թափվել, որ այն չէր կարող չազդել երիտասարդների կրոնականության մակարդակի վրա:

Հայաստանի ժողովրդավարացման պայմաններում, երբ իշխանությունը ձեռք է բերել օրինական հիմք, եկեղեցին նորովի է որոշում իր սեփական առաքելությունը: Այս առիթով բնակչության մեջ իր ազդեցության հետագա տարածման համար եկեղեցին ակտիվորեն օգտագործում է ՀՀ Սահմանադրությամբ ապահովված խոսքի և խղճի ազատության սկզբունքները:

¹ Лисовский В.Т., Социология молодежи, Москва, 2008, ст. 231.

Ուժեղացնելով Հայ Առաքելական Եկեղեցու կողմից տարվող աշխատանքները երիտասարդության շրջանում, հատկապես՝ նրանց մոտ քրիստոնեության գաղափարների արդյունավետ ձևավորման գործում՝ անհրաժեշտ է, որպեսզի եկեղեցին լուրջ ուշադրություն դարձնի երիտասարդների կենսագործունեությանը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

Մեր կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ երիտասարդների վրա կրոնի ազդեցությունը կապված է ոչ միայն կոնկրետ ոլորտներում երիտասարդների կենսագործունեության հետ, այլ նաև՝ եկեղեցու կողմից տարվող որոշակի կարգավորիչ ազդեցություն ցուցաբերելու ունակության հետ: Վերլուծելով այս ունակությունները՝ կարելի է նշել, որ երիտասարդության հոգեբարոյական կյանքի վրա Հայ Առաքելական Եկեղեցու ազդեցության կարևորագույն ձևերից մեկը նրա կողմից քրիստոնեական բարոյական սկզբունքների ոգով երիտասարդների դաստիարակումն է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

SUMMARY

Our sociological research shows that the Armenian Apostolic Church's mission is to bring close the religion to the society, especially among the youths, and doing so, to create a spiritual bridge between the generations. To assist in the process of integration of young people grown up in the streets and help them become full members of the society by bringing them up with Christian ethical principles.

The result of our sociological researches show the impact of the religion on young people of deferent fields is its ability to show effectiveness by certain regulatory. Analyzing this ability, we can mention that one of the ways that the Apostolic Church influences on the young people's spiritual life is educate them by the Christian ethical principles in all the fields of society.

РЕЗЮМЕ

Усиливая введенные Армянской Апостольской церковью работы в рядах молодежи, особенно в деле формирования у них эффективных христианских идей, необходимо, чтобы церковь обратила серьезное внимание на жизнедеятельность молодежи во всех областях общественной жизни.

Приведенные нами результаты социологических опросов показали, что влияние религии на молодежь зависит не только от жизнедеятельности молодежи в конкретных сферах, но и от умения церкви проявить определенные регуляторы влияния. Анализируя эти умения, можно отметить, что на духовно-моральную жизнь молодежи одной из важнейших форм влияния Апостольской церкви является воспитание в них христианских моральных принципов во всех сферах жизни.